

MOCK ARBITRATION COMPETITION ԱՐԲԻՏՐԱԺ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ 2022

ԿԱՆՈՆՆԵՐ

Արբիտրաժ խաղ-մրցույթի Գրավոր Փուլի

Ներածություն

COVID 19-ի համաճարակով պայմանավորված նախատեսվում է 9-րդ Արբիտրաժ խաղ-մրցույթը («Մրցույթ») անցկացնել «հիբրիդ» եղանակով: Այդ նպատակով Մրցույթի անցկացման կարգը բաժանվում է երկու փուլի՝ «Գրավոր Փուլ» և «Բանավոր Փուլ»:

Մրցույթի Գրավոր Փուլին մասնակցում են բոլոր այն թիմերը, որոնք մինչև Մրցույթի ժամանակացույցում նշված ամսաթիվը Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել:

Մրցույթի Գրավոր Փուլը կանցկացվի բացառաբար գրավոր կարգով այս՝ «Գրավոր Փուլի Կանոններ»-ի կիրառմամբ:

Դատախաղի մնացած բոլոր կանոնները մնում են անփոփոխ, որոնք հասանելի են «Էյ-Դի-Ար» Կլինիկայի կայք էջում հետևյալ հղմամբ՝

<https://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>:

1 Կանոնները

- 1.1 Սույն կանոնները կիրառվում են Մրցույթի Գրավոր Փուլում և սահմանում են Գրավոր Փուլի կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ մասնակցող թիմերի, արբիտրների ընտրության, ինչպես նաև Մրցույթի հետ կապված այլ ընթացակարգային պայմանները:
- 1.2 Կանոններին առնչվող ցանկացած ժամանակացույց հանդիսանում է դրանց անբաժանելի մասը:
- 1.3 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխելու Կանոնները և անհրաժեշտության դեպքում սահմանելու լրացուցիչ կանոններ Մրցույթի անխափան ընթացքն ապահովելու համար:

2 Գրավոր Փուլի անցկացման կարգը

- 2.1 Այս Փուլին մասնակցում են Մրցույթին մասնակցության համար ժամանակին գրանցված բոլոր թիմերը:
- 2.2 Հայցի և Պատասխանի և հայցվորի ու պատասխանողի գրավոր դիրքորոշումների ներկայացման ընթացքում գործում են «Արբիտրաժ խաղ-մրցույթի» Կանոնները՝ առանց փոփոխության:

- 2.3 Գրավոր Փուլում հակառակորդ թիմերը որոշվում են առցանց վիճակահանության արդյունքում, որն անցկացվում է նախապես որոշված ժամակացույցով սահմանված օրը և ժամին:
- 2.4 Նույն օրը յուրաքանչյուր թիմին է ուղարկվում հակառակորդ թիմի առաջին գրավոր դիրքորոշումները:
- 2.5 Թիմերին տրամադրվում է 2 օր ժամանակ իրենց երկրորդ գրավոր դիրքորոշումները (rebuttal) պատրաստելու և ուղարկելու համար:
- 2.6 Մրցակցող թիմերի երկրորդ դիրքորոշումները ուղարկվում են արբիտրներին գնահատելու համար: Արբիտրներին տրամադրվում է 5 օր գնահատման թերթիկները լրացնելու և կազմակերպիչին վերադարձնելու համար:
- 2.7 Գրավոր Փուլի արդյունքում առավելագույն միավորներ հավաքած չորս թիմերը անցնում են կիսաեզրափակիչ փուլ:
- 2.8 Գրավոր Փուլի արդյունքները կհայտարարվեն առցանց եղանակով, որի ընթացքում նաև կհայտարարվեն այն թիմերը, որոնք անցել են կիսաեզրափակիչ փուլ: Գրավոր Փուլի արդյունքները հայտարարելու ընթացքում նաև կորոշվի թե կիսաեզրափակիչ փուլում որ թիմն է հանդես գալու որպես հայցվոր, և որ թիմը՝ որպես պատասխանող:

3 Գրավոր աշխատանքները

Գրավոր Փուլի ընթացքում թիմերը ներկայացնում են երկու՝ «առաջին» և «երկրորդ» գրավոր դիրքորոշում:

3.1 Առաջին գրավոր դիրքորոշում

- (1) Թիմերը **Չայցվորի դիրքորոշումը** և **Պատասխանողի դիրքորոշումը** պետք է PDF և MS Word տարբերակներով ուղարկվեն adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին, մինչև պաշտոնական ժամանակացույցում նշված ամսաթիվը և ժամը:
- (2) Թիմերը կարող են վերահանձնել իրենց գրավոր աշխատանքը՝ առանց տույժի ենթարկվելու՝ մինչև վերջնաժամկետի ավարտը:
- (3) Սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո՝ մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 8:00, թիմերը դեռևս կարող են ուղարկել իրենց աշխատանքները, սակայն, այս դեպքում վերջիններիս աշխատանքի վրա կիրառելի է տույժ 2-ից 5 միավորի չափով:

3.2 Առաջին գրավոր դիրքորոշման ներկայացման պահանջները.

(1) Գրավոր աշխատանքը պետք է բաղկացած լինի.

- տիտղոսաթերթից,
- օգտագործված գրականության ցանկից,
- գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի շարադրումից,
- յուրաքանչյուր պահանջը հիմնավորող փաստարկներից (օրենքի կիրառումը փաստերի նկատմամբ),
- եզրակացությունից:

(2) Գրավոր աշխատանքը պետք է կազմված լինի.

- A4 ստանդարտով և չորս կողմերից ունենա հավասար լուսանցքներ 2.0 սմ,
- ոչ ավելի, քան 15 էջի սահմաններում, ներառյալ տիտղոսաթերթն ու օգտագործված գրականության ցանկը (յուրաքանչյուր դիրքորոշում՝ Հայցվորի և Պատասխանողի),
- սիլֆայեն (sylfaen) կամ այլ յունիկոդ տառատեսակով, 12 տառաչափով,
- հղումները և ծանոթագրությունները պետք է լինեն 10 տառաչափով, իսկ տեքստում կատարված մեջբերումները՝ շեղատառ (*Italic*),
- կրկնակի տողաբացվածքով (double-spaced)՝ բացառությամբ տիտղոսաթերթի,
- ծանոթագրությունները՝ միաբացվածքով (single-spaced),
- յուրաքանչյուր պարբերություն պետք է լինի համարակալված:

Նմուշային օրինակը ներկայացված է նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կայքի բաժնում հետևյալ հղումով՝

<http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>:

3.3 Երկրորդ գրավոր դիրքորոշում

- (1) Յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի իր երկրորդ գրավոր դիրքորոշումը՝ նախապես ստացած **Հայցվորի** կամ **Պատասխանողի դիրքորոշմանն ի պատասխան**, որոնց PDF և MS Word տարբերակները պետք է ուղարկվեն adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին պաշտոնական ժամանակացույցով որոշված ժամկետներում:
- (2) Թիմերը կարող են վերահանձնել իրենց գրավոր աշխատանքները՝ առանց տույժի ենթարկվելու՝ մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը:
- (3) Ծատ կարևոր է, որ թիմերը երկրորդ դիրքորոշումներում անդրադառնան հակառակորդ թիմերի հայցում կամ պատասխանում բարձրաձայնված բոլոր փաստարկներին, քանի որ երկրորդ դիրքորոշումները գնահատող արբիտրները մեծ կարևորություն են տալու նրան, թե ինչպես են թիմերը հերքում հակառակորդի բերած փաստարկները:

3.4 Երկրորդ գրավոր դիրքորոշման ներկայացման պահանջները.

- (1) Երկրորդ գրավոր դիրքորոշումը պետք է բաղկացած լինի.
 - տիտղոսաթերթից,
 - յուրաքանչյուր պահանջը հիմնավորող փաստարկներից (օրենքի կիրառումը փաստերի նկատմամբ),
 - Հակառակորդ թիմի փաստարկները մեջբերելիս հղում կատարի դիրքորոշման կոնկրետ կետերին:
- (2) Երկրորդ գրավոր դիրքորոշումը պետք է կազմված լինի.
 - A4 ստանդարտով և չորս կողմերից ունենա հավասար լուսանցքներ 2.0 սմ,
 - ոչ ավելի, քան 10 էջի սահմաններում,
 - սիլֆայեն (sylfaen) կամ այլ յունիկոդ տառատեսակով, 12 տառաչափով,

- հղումները և ծանոթագրությունները պետք է լինեն 10 տառաչափով, իսկ տեքստում կատարված մեջբերումները՝ շեղատառ (*Italic*),
- կրկնակի տողաբացվածքով (double-spaced)՝ բացառությամբ տիտղոսաթերթի,
- ծանոթագրությունները՝ միաբացվածքով (single-spaced),
- յուրաքանչյուր պարբերություն պետք է լինի համարակալված:

4 Ընդհանուր պահանջներ

4.1 Հայցի և պատասխանի յուրաքանչյուր տիտղոսաթերթ պետք է պարունակի հետևյալը.

- թիմի համարը՝ վերևի աջ անկյունում (տրվում է Կազմակերպչի կողմից),
- նշում այն մասին, թե փաստաթուղթը հայց է, թե՝ պատասխան,
- գործի անվանումը (նշված է գործում),
- գործում նշված կողմերի անվանումները (նշված է գործում),
- ամիս, ամսաթիվ, տարեթիվ:

4.2 Գործի փաստերի շարադրումը և հիմնավորումները.

Փաստերը շարադրելիս թիմերը պետք է սահմանափակվեն խնդրում առկա փաստերով և չփորձեն ավելացնել նոր, չապացուցված փաստեր կամ խեղաթյուրել դրանք:

Խորհուրդ է տրվում փաստարկները և իրավական հիմնավորումները ներկայացնելիս օգտվել տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ գիտական հոդվածներից, դասագրքերից, արբիտրաժային և դատական գործերից, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններից և այլն:

4.3 Գրավոր աշխատանքի մեջ օգտագործված աղբյուրներին հղում կատարելու համար պետք է օգտագործվեն ծանոթագրություններ (footnotes):

4.4 Գրավոր աշխատանքը պետք է լինի բացառապես մասնակցող թիմերի անդամների մտավոր գործունեության արդյունքը:

4.5 Երրորդ անձի ստեղծագործության ոչ իրավաչափ օգտագործումը առանց հղում կատարելու համարվում է գրագողություն (պլագիատ): Գրագողություն և հայտնաբերելու դեպքում կկիրառվի տույժ 10-30 միավոր՝ կախված ծավալից:

4.6 Գրավոր Փուլի համար սահմանված կանոնները չպահպանելու համար կկիրառվի տույժ մինչև 10 միավորի սահմաններում՝ կախված խախտման բնույթից և քանակից:

5 Գնահատման չափանիշները և կարգը

5.1 Գրավոր Փուլի գնահատման չափանիշները հետևյալն են.

- Փաստերի և իրավունքի իմացության համադրություն՝ **30** միավոր,
- Ուսումնասիրության մակարդակ և օգտագործված աղբյուրներ՝ **30** միավոր,
- Պատշաճ վերլուծություն՝ **20** միավոր,
- Կազմակերպվածություն և շարադրանքի հստակություն՝ **10** միավոր,
- Ոճ, գրագիտություն՝ **10** միավոր:

5.2 Առաջին և երկրորդ գրավոր դիրքորոշումների գնահատման արդյունքում առավելագույն միավոր հավաքած չորս թիմերը անցնում են կիսաեզրափակիչ փուլ:

5.3 Թիմերին գնահատելիս արբիտրները գնահատում են 5.1-րդ կետում նշված չափանիշների համար առանձին-առանձին և նշված միավորների սահմաններում:

6 Արբիտրները

- 6.1 Գրավոր աշխատանքները գնահատվում են 3 (երեք) արբիտրների կողմից:
- 6.2 Թիմերի կողմից ներկայացված երկու գրավոր դիրքորոշումները ստանալուց հետո արբիտրներն ունեն 5 օր աշխատանքները գնահատելու համար:

7 Ժամկետներ

- 7.1 Մրցույթի մասնակցության ժամկետների պահպանումը հանդիսանում է էական պայման:
- 7.2 Մրցույթի ժամկետների փոփոխությունների վերաբերյալ կողմերը կտեղեկացվեն թիմի ավագի էլ. փոստի կամ հեռախոսի միջոցով:

8 Կազմակերպիչի հետ կապը

- 8.1 Մրցույթի վերաբերյալ հարցերը կարող եք ուղղել adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին կամ զանգահարել 055 888325 հեռախոսահամարով: